ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«12» օգոստոսի 2024 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Օգոստոսի 12-ը՝ Երիտասարդների օր

ՄԱԿ-ի կողմից հաստատված ամենամյա այս տոնն առաջին անգամ նշվել է 2000 թվականի օգոստոսի 12-ին և նպատակ ունի մեծացնել երիտասարդության դերն ու ներգրավվածությունն ամենատարբեր ոլորտներում:

Երիտասարդների լրջագույն դերակատարությունը կարևորվում է երկրի կայուն զարգացման ու հզորացման գործում, քանզի երիտասարդությունն է այն ուժը, որ կարող է իր նորարարական գաղափարներով ու գիտելիքներով արագ արձագանքել ցանկացած մարտահրավերի:

Սիրելի երիտասարդներ, շնորհավորում եմ ձեզ Երիտասարդության միջազգային օրվա առթիվ՝ մաղթելով բոլորիդ քաջ առողջություն, նպատակասլացություն, անկոտրում կամք:

Ապրեք և արարեք խաղաղ երկնքի տակ, ձեր գիտելիքները, ուժն ու եռանդն օգտագործելով ի շահ հարազատ համայնքի և հայրենիքի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ